

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

VOL. I. N. 19

FRESNO, CAL. SATURDAY, DEC. 26, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 19.

ՖՐԷՉՆՕ, ԲԱԼ. ՇԱՔԱԹ, ԴԵԿՏ. 20, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

## ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

Իսթ Օրէնճէն կը գրեն մեզ թէ տեղւոյն հայ աւանդակացի օրիորդաց՝ որբերու Հոգատար ընկերութիւնը՝ ժամանակէ մ'ի վեր իր պատրաստած վաճառահանգէսը տուած է Նոյեմբեր 20ին՝ Տիկին Նազար Գոստիկեանի ընդարձակ հիւրանոցին մէջ մեծ յաջողութեամբ: Անդամուհիներու կողմէ տրուած շատ մը ընտիր ձեռագործներէ զատ՝ վաճառուած են՝ այլ և այլ անձերէ տրուած նուէրներ, պողպատեղակ, կարկանդակներ ու զովացուցիչ ըմպելիներ: Վաճառահանգիսի բոլոր ծախքերը գոյուելէ վերջ՝ զուտ հասոյթ եղած է 165 տոլար. աւելցած է նաև շատ մը ձեռագործներ ու զանազան նուէրներ՝ ուրիշ վաճառահանգէս մը տալու չափ բաւական: Մեր թղթակիցը կը յաւելու նաև թէ վաճառահանգիսի կազմակերպութեան համար՝ ինչպէս նաև հանդիսին օրը անխոնջ կերպով աշխատած են՝ Ընկերութեան Նախագահը Օր. Ուէթրօ, Օրիորդ Արուսեակ, Զապէլ և Նուարդ Գոստիկեան և Օր. Տիկին:

Իսթ Օրէնճի Հոգատարը արժանի է ամեն զովեստի և քաջակերութեան, որ՝ առանց արժուկ հանելու և առանց իսկ իր գոյութիւնը՝ մինչև վերջի օրերս՝ հըրապարակ հանելու՝ կրցած է նշանակելի ծառայութիւն մը մատուցանել մեր անտէր որբերուն որք կրունան ի հարկէ դեռ աւելին ակնկալել իսթ Օրէնճի այս Հոգատար աղջիկներէն:

—Անցեալ Զորեքշաբթի երեկոյ տեղի ունեցաւ քաղաքիս տիկնանց Որբախնամ Ընկերութեան տարեկան վաճառահանգէսը՝ Երիցական եկեղեցոյ մէջ՝ ի ներկայութեան 150ի չափ երկսեռ ազգայնաց: Հանդէսը բացուեցաւ Փրօֆ. Մալլարեանի ատենապետութեամբ: Երգեր երգուեցան, գաշնակի վրայ ընտիր կտորներ նուագուեցան և կարճ ատենարանութիւններ եղան նախագահին և Պ. Մինասեանի կողմէ: Ժամը 9ի մօտ էր երբ հանդէսին այս մասը ընկաւ ու ժողովուրդը գնի սկսեց՝ ի վաճառ հանուած զանազան ձեռագործներն և պիտանի առարկայները որք՝ մեծաւ մասամբ՝ ընկերութեան անդամներու կողմէ նուէր տրուած էին:

Կէս գիշերի մօտ էր երբ հանդէսը գոցուեցաւ. և բրուն զուտ արդիւնքը եղած էր 35 տոլարի չափ՝ բացի կարգ մը առարկաներէ որք չէին կրցած վաճառուիլ:

—Պատ. Պէննէեան կը գրէ թէ անցեալ Կիրակի օր

ԲԸԹՆԸՐ ԿՕԼՏԸՍԹԻՆ ԲԸՄՓԸՆԻ

Ֆրէզնոյի ՄԵԾ Խանութը

**KUTNER-GOLDSTEIN CO.**

THE HOUSE THAT SAVES YOU MONEY

Ֆրէզնոյի Խաւազոյն Խանութը

**\*\* ԾՆՈՒՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐ \*\***

Հօրը, Մօրը, Բոլորը, Եզրօրը — և ամեն մարդու համար: Մեծ քանակութեամբ ապրանք՝ անկէ ընտրելու համար. ամենափոքր գիններ: Բարի գալուստ նայելու եկողներուն:

**ԱՁԴ**

Կը խնդրենք մեր բոլոր գործակալներէ որ հաճին իրենց հաշիւները զրկել մեզ՝ մինչև Յունվար 1:

Չի վճարող բաժանորդներէն ալ կը խնդրուի իրենց հին պարտքերը վճարել անյապաղ:

Հրազդոյս 1903ի բաժանորդագրութիւնը բացուած է: Բաժանորդագիրը նոյն կը մնայ, իսկ թերթին վրայ ըլլալիք փոփոխութեանց մասին պիտի գրենք զալ անգամին:

Ութըրի մէջ տօնած են տեղւոյն Մարտիրոսաց եկեղեցոյ շինութեան առաջին տարեգարձը: Նոյն աղբիւրէն կը տեղեկանանք թէ յիշեալ եկեղեցոյ կից եղող կտոր մը պարապ հողն գնած է ժողովուրդը 1200 տոլարի բրուն 400ը վճարած՝ իսկ մնացեալին համար դիմում եղած է Միացեալ Նահանգաց բարեկեցիկ Հայոց առատաձեռնութեան:

—Անցեալ Հինգշաբթի երեկոյ Երիցական եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ Մ. Մինասեանի Ամերիկայ գալուն 54րդ տարեգարձի հանդէսը՝ խուռն բազմութեան մը ներկայութեամբ: Հանդէսին նախագահեց Փրօֆ. Մելգոն: Տ. Մինասեան իր համառօտ կենսագրութիւնը ըրաւ և շատ մը շահեկան տեղեկութիւններ հաղորդեց հանդիսականաց՝ Ամերիկայի հայ գաղթականութեան ծննդի և սկզբնաւորութեան վրայ:

Շնորհաւորականներ խօսեցան այս առթիւ Տքթ. Բարսեղեան, Փրօֆ. Մալլարեան, Մ. Մարգարեան և Յ. Ասլանեան: Տիկին Յ. Առաքելեան քանիցս գեղեցիկ կտորներ նուագեց Կաշնակի վրայ, և Պ. Կակուեան "Երուսաղէմը" երգեց նշանակելի յաջողութեամբ:

Մանուկ Մանուկեանի մէկ արտասանութիւնը քաղցր տպաւորութիւն թողուց ժողովրդին վրայ:

Ժամը 11ի մօտ էր երբ Հանդէսը փակուեցաւ Անդրիերէն "Մայ Քընթրի" երգով, որմէ շատ մը օրինակներ ցրուեցան ժողովրդեան՝ մասնաւորապէս Պ. Մինասեանի կողմէ տպագրել տրուած: Փակումէն վերջ Հանդիսականներէ շատերը գնացին իրենց խընդակցութիւնը անձամբ յայտնել ծերունի յորելարին:

—Չամիչի ընկերութիւնը կը յայտարարէ թէ որոշած է կէս սէնթի նախաձեռն մը ևս ընել այգեպաններուն՝ իր անոնցմէ ստացած չամիչներու իւրաքանչիւր փառնտին՝ առանց անոնց տեսակը նկատողութեան առնելու: Այս դրամները բաժնուելու պատրաստ պիտի ըլլան երկու շաբաթէն:

—Սան Ֆրանսիսկոյէ Մանիլա և ծայրագոյն Արևելք երկարաձգուելիք հեռագրական թելը, որ Սիլվերթաւն անուն մեծ շոգենաւին մէջ ամբարուած՝ կըսպասէր քանի մը օրերէ ի վեր Սան Ֆրանսիսկոյի առջև, անցեալ կիրակի օր ձգուել սկսեց խաղաղականի մէջ՝ մեծ Հանդէսով: Մեքենագէտ ելէքտրագործք նախ թելին ծայրը հաղորդակցութեան մէջ դրին ցամաքին հետ՝ եզերաց վրայ շինուած մասնաւոր շէնքի մը մէջ, և ապա հսկայ շոգենաւը սկսեց յառաջանալ իր ետևէն երկայն թելը թողլով ջուրին մէջ:

Սիլվերթաւն որ բաւական յառաջացած է այժմ, յարարութեան մէջ է ցամաքի հետ: Վերջի լուրը սա է նոյն շոգենաւէն թէ ամէն ինչ յաջող կերթայ, ու հսկայ շոգենաւը իր պարտականութիւնը կը կատարէ տմենայն ճշդապահութեամբ: Սիլվերթաւնի նաւակետը կը վստահացնէ Ամերիկեան ժողովուրդը թէ քանի մը օրէն պիտի յաջողի Ամերիկայի և Հավայեան կղզիներու հեռաւորութիւնը կարճեցնել՝ պղտիկ կղզին մեծ կիսագնտիս հետ հեռագրական յարաբերութեան մէջ գնելով:

—Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգարարձութեան ընտրութիւնը տեղի կունենայ վաղը:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—Առևտուրի մէջ մարդիկ երկու բանէ կը վախնան՝ խարուելէ և չի խարելէ:

—Լուծիւնը գուցէ ոսկի է, բայց քսան տոլառնոց ոսկին բարձրաձայն կը խօսի:

—Հնազանդ կինը ընտանեկան գազին ետևը գտնուող ամենամեծ զօրութիւնն է:

—Դժուարին է համոզել քեզ թէ քու վրայ գովեստիւ խօսող անձը ստախօս է:

—Ոսկի հակիթ ածող բաղը ընդհանրապէս ուրիշի մը կը վերաբերի:

—Դժուարին է շատ անգամ ետ երթալ և ըսել ինչ որ չէր ըսուած, բայց անկարելի է վերագաղտնալ և չեզոքացնել ինչ որ պէտք չէր ըսել:

ԶԵՐ ԱՏԱԽԶՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ս. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ. ՓՐԷՋՆՕ ԳԱԼ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս Թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ Սըթրըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար սոմն կը վաճառէ միլենոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ  
Տիվիժըն Փասինճըր Էյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ  
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ձէՑ Փողոց,  
Նոր Փաթըրսըն Պաքին առջև

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

Թ Ո Ի Զ Ի , Գ Ե Ղ Զ Ի Ո Ի Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ  
Զ Ո Ր Պ Տ Ո Ի Ղ Ն Ե Ր Ո Ի :

ԳՐՈՇԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 'ԲԱՂԱՔՍՅԻ' Ի

Միտլպորո, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթ Ինսվիլ,	'	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպքըն, Ն.	ձէրդի	—	Հ. Մաղուճեան
Պրոյթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պոսթըն, Մասս.	—	Սիրականեան և Դանիէլեան	Սէլմ,
Սըմիթ, Նիւ ձէրդի	—	—	Ա. Թաշճեան
Հէվրի, Մասս.	—	—	Ս. Հացագործեան
Սէնթրըլ Ծօյս, Մասս.	—	—	Մ. Կարօ
			Նշան Մինասեան

Զեր Ապահովագրութեան համար գիմեցէք առ

Պ. Ֆ. ՇԵՓԻՐՐԱՆ և շ ԸՆԿ.

1123 ձէՑ Ըսթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախողք միշտ գոհացում կստանան:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՐՈՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ  
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՑԻՑ ԷՑՃԷՆԹՆԵՐ  
Բիւմաթիզմի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ ջուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

Տօն օրերու յարմար նուեննդր արգուզարդի վզրաբերեալ տպրանքներ գնելու համար գնա Ֆրէզնօ Ֆառմասին: Տրթ. Ս. Փատըք 1162 Ա Փողոց, Ֆրէզնոյ:

ԴՐԱՄԸ ԳՈՐԾԱԽՈՐԻՆ ԳԷՄ

Ածուխի հանքատեարց ու հանքագործներու մէջ ծագած դժուարութիւնները լուծելու պաշտօնով Նախագահ Բուզուվէլթի կողմէն կարգուած յանձնաժողովը իր նիստերը կը շարունակէ տակաւին Բարբանթընի մէջ, ու վկայութիւններ կը լսէ: Մինչև հիմայ յիսուների մօտ վկայներ հարցաքննուած ու շատ սուկայի պատմութիւններ պատմած են: Այս վկայութիւնք կը թուի թէ արդար զայրոյթով լեցուցաց են Միացեալ Նահանգաց ժողովուրդը, ու շատ խորունկ սպաւորութիւն ձգած են յանձնաժողովին վրայ՝ ի նըպատ տառագեալ գործաւորութեան:

Մեր ընթերցողաց գաղափար մը տալու համար այս վկայութեանց մասին՝ Քօլ անուն ծերունի հանքագործի մը պատմութեան մէկ մասը արտասպենք ստորև՝ որ կերեւի թէ մասնաւոր ուշադրութիւն գրաւած է ամեն կողմ:

Տասն և ինը տարիէ ի վեր կը գործեմ, ըսած է այս մարդ, Մարքըլ ընկերութեան հանքերուն մէջ, և քնակարանս ըրած եմ նոյն ընկերութեան տուներէն մին՝ մինչև անցեալ շարթու՝ երբ արտաքսուեցայ անկէ՝ տեղական իշխանութեան ձեռքով: Ունիմ կին մը, տղայ մը, երկու որդեգիրներ և զորանչ մը որ 102 տարեկան է: —Այս երկու որդեգիրները հանքագործի մը զաւաններն են. այդ դժբախդը ինծի հետ միասին կը գործէր երբ սպաննուեցաւ՝ պայթումի մը առթիւ: —Անոր զաւակները անօթի փողոցները պիտի մնային եթէ քանի մը հանքագործներ չի որդեգրէինք զանոնք: —Իմ բոլոր մարմնոյս մէջ մէկ ամբողջ ոսկոր մը կարելի չէ գտնել այժմ: Անգամ մը՝ այնչափ ծանր կերպով վնասուեցայ՝ որ ընկերներս հանգանակութիւն մը ըրին իրենց մէջ և 50 տողարի չափ ընկերութեան վաճառատուն յանձնեցին՝ տանս վարձը և գնած նպարեղէններուս գինը վճարելու համար: —Աս տասնևինը տարիներուն մէջ կրցած չեմ սէնթ մը իսկ աւելցնել: Չարաչար աշխատութեամբ շահած գրամս՝ տանս վարձքին ու ընտանեացս ապրուստին չէ բաւեր: —Գործադուլէն վերջ ընկերութիւնը մերժեց զիս ընդունիլ: —Ճամանակ առաջ ինձ լուր տրուեցաւ օր մը թէ տունէս փոխադրուելու էի: —Կը խորհէի թէ ընկերութիւնը չի պիտի ուզէր ծայրայեղութեան երթալ իր հին աշխատաւորներէ մէկին դէմ, և պիտի սպասէին մինչև որ սկսէի գործել և տանս վարձքը վճարելը վերջերս օր մը Շէրիֆը եկաւ իմացուց թէ անմիջապէս տունէս փոխադրուելու էի: Պատասխանեցի թէ ծերունի կինս ծանր հիւանդ էր և վտանգաւոր կըլար տնէն դուրս հանել զայն, և քանի մը օր ժամանակ խնդրեցի: Պաշտօնեայն՝ Մարքըլ ընկերութեան նախագահին ներկայացուց խնդիրս որ բացարձակապէս մերժուեցաւ, և քիչ մը վերջը բնակարանիս բոլոր կահ կարասիները փողոց նետուեցան, իսկ հիւանդ կինս զրացիի մը տունը փոխադրեցինք:՝

Պիշըփ Բոփոլանիկ՝ Անգղիական Եկեղեցւոյ եպիսկոպոսներէն մին որ յանձնախմբի անդամներէն մէկն է՝ իւր աթոռը շարժելով՝ երեսը պատին կը դարձնէ,

իսկ միւս անդամները ինչպէս նաև ունկնդիրք կը տըժգունին՝ երբ ծերունին հարցման մը պատասխանելով կըսէ թէ կինը՝ չի կրնալով դիմանալ արտաքսումի անպատեհութեանց՝ մեռած էր:

Այսօրինակ վկայութիւններ կը կարծուի որ պիտի հարկադրեն Գաշնակցական Կառավարութիւնը դարման մը տանիլ այս չարեաց ու անդունդներուն մէջ շարչարուող աշխատաւորին բաղդը ազատել՝ կարգ մը անխիղճ դրամատիրաց քմհանդէս:

Եւ արդարև գործաւորական շարժմանց պատմութեան մէջ այս առաջին անգամն է որ գործաւորական հարց մը այս աստիճանի կարևորութիւն կըստանայ: Նախագահ Բուզուվէլթ մեծ դեր մ'ունեցաւ ի հերկէ այս մոռցուած խնդրին մէջ. և այդ պատճառաւ է որ աշխարհի բոլոր գործաւորական կազմակերպութեանց կուռքը դարձեր է հիմայ: Ամերիկեան մամուլը՝ մանաւանդ անունը որ գործաւորական դատին կը համակրին՝ վստահութեամբ կըսեն թէ այս հարց այս աստիճանի կարևորութիւն ստանալէ վերջ՝ կարելի չէ որ բարուք լուծում մը չունենայ՝ Միացեալ Նահանգաց անուան ու համբաւին արժանի:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

Սան Ռօքիև Վայի Լուրն Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.  
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ  
Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա:  
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Է. Օ. ՏՐԱՅԸՐ

2241 Ֆրէզնօ փողոց, — — — Ֆրէզնօ Քալ.  
Թէլէֆօն, ՊԼՈՒ 76

Ամեն տեսակ փլումիկ

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻԶ — Սամաըն Ուինստիլի և Թէնքի:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

1255 ԱՅ Փողոց, — — — Ֆրէզնօ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

— Գոհացում կը սրուվ բոլոր յաճախորդաց —

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՃԷՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ  
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար  
Տարեկան մէկ ու կէս \$ոյ. — Վեցամսեայ 75 Անթ  
Ուրիշ երկիրներու Համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ  
Կը Հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033  
Բաժանորդագիրն Կանխիկ Վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը ղրկուին Խմբագրու-  
թեան Հետեւեալ Հասցէի:

To The Editor of  
THE CITIZEN  
P. O. Box 01224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the  
State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year.....\$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ԴԵԿՏ. 20, 1902

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳՆԵՐ

—0—

ՎԷՆԷՉՈՒԷԼԱՅԻ ՇՈՒՐԶԸ

—0—

Հարաւային Ամերիկայի ծայրագոյն Հիւսուսային  
այս պղտիկ հանրապետութիւնը կը թուի թէ կարգ մը  
անպատեհութեանց և թերեւս աւելի ծանր դժուարու-  
թեանց պիտի ենթարկէ Միացեալ Նահանգները:

Վէնէզուէլա՝ վեջի քանի մը տարիներէ ի վեր ներքին  
կռիւներ ունեցած էր՝ երկրին յեղափոխական կուսակ-  
ցութեան հետ: Այս քաղաքական կռիւներու ժամա-  
նակ Անգղիայի և Գերմանացի Հպատակներ Ֆիասուած  
էին նիւթապէս: Ասոնք իրենց ֆիասոները քանիցս պա-  
հանջեցին՝ իրենց կառավարութեան միջոցաւ: Նախա-  
գահ Քասթրօ, որուն համար կըսուի թէ նուրբ քա-  
ղաքագէտ մը ըլլալու կարողութենէ զուրկ է, եր-  
բեմն մերժեց և երբեմն ձգձգեց այս պահալի խնդիրը՝  
խորհելով անշուշտ թէ Եւրոպական կառավարութիւնք  
չի պիտի կրնային ծայրայեղութեանց դիմել՝ քանի որ  
Մենրոյի վարդապետութիւնը Միացեալ Նահանգները  
ինամակալ կացուցած էր բոլոր Ամերիկայի: Յիշեալ  
կառավարութիւնք սակայն՝ Միացեալ Նահանգաց հա-  
ճութիւնը առնելէ յետոյ՝ վերջնագիր մը յղեցին Վէ-  
նէզուէլայի՝ ամսոյս Ցին և անմիջական կարգադրու-  
թիւն մը պահանջեցին՝ երկրին նաւահանգիստները  
պաշարելու սպառնալիքով: Նախագահ Քասթրօ՝ փո-  
խանակ կարգադրութիւն մը ընելու՝ սկսեց Անգղիայի

և Գերմանացի Հպատակներն ձերբակալել ու բանտ  
դնել տալ: Այս ընթացքը ի հարկէ չէր կրնար ար-  
դարանալ, և Եւրոպական մեծ կառավարութիւնք չէին  
կրնար անտարբեր մնալ՝ երբ մանաւանդ Մենրոյի վար-  
դապետութիւնը փորձի ենթարկելու դեղեցիկ առիթ մը  
կը ներկայար իրենց, ուսկէ կարելի էր օգուտ քաղել:

Ընթերցողք գիտեն արդէն թէ անցեալ շաբթու  
յիշեալ տերութեանց միացեալ նաւատորմի ղը Վէնէ-  
զուէլայի քանի մը նաւերը խորտակեց, քանիներն ալ  
գերի առաւ, ցամաքը զօրք հանեց՝ այլ և այլ պատր-  
ուակներու ներքև ու պաշարումը սկսեց անմիջապէս:

Ամբօրը՝ այս առթիւ բարկութեամբ լեցուած՝ Փու-  
էթրօ Քասթրօ նաւահանգիստին մէջ գտնուած Անգղիա-  
կան թօփաղ անուն վաճառականական նաւուն վրայ  
յարձակեցաւ նոյն օրը և անոր դրօշակը անպատեհց:  
Այս ի հարկէ վերին աստիճանի նախատինք մ'էր  
Մեծին Բրիտանիոյ: Ուստի Անգղիական ծովակալը  
բացատրութիւն պահանջեց նոյն օր, և Չ ժամ ժամա-  
նակ տուաւ Վէնէզուէլայի կառավարութեան՝ զոհա-  
ցում ապա և ներողութիւն խնդրել: Նախագահ Քաս-  
թրօ թէև հրաման ղրկեց Փուէթրօ Քասթրօյի կա-  
ռավարչին պէտք եղած դոկացումը ապա Անգղիական  
ծովակալին՝ բայց հրամանը ժամանակին հասած ու  
պէտք եղած օրինական բացատրութիւնները տրուած  
չըլլալով՝ Անգղիական և Գերմանական երկու զըրա-  
հանաւեր ուժակոծել սկսեցին նոյն քաղաքի բերդերը,  
ուսկէ թէպէտեւ Վէնէզուէլայիք պատասխանեցին  
Եւրոպական կրակներուն՝ բայց կէս ժամի մէջ ի-  
րենց թնդանօթները լռեցին և հին բերդը՝ քար ու  
քանդ՝ ինկաւ Եւրոպական ծովային զօրքերու ձսօքը  
որք ցամաք ելլելով գրաւեցին զայն, ու բերդին հրա-  
մանատարը գերի բռնեցին:

Նախագահ Քասթրօ՝ ճարահատած՝ Ամերիկեան Հիւ-  
սուստոյի միջոցաւ Մ. Նահանգաց միջամտութիւնը  
խնդրեց՝ խաղաղութիւնը վերահաստատելու համար:

Այս առաջարկը զրկուած է երկու տէրութեանց  
արտաքին գործոց նախարարութեան. սակայն անոնց  
պատասխանը ընդունուած չէ տակաւին:

Բայցի առկէ՝ Ուաշինկթընի կառավարութիւնը բա-  
ցատրութիւն պահանջած է Եւրոպական երկու կառա-  
վարութիւններէն՝ իրենց վերջի անտեղի ընթացքին  
համար: Ասոնք թէև Միացեալ Նահանգաց հաճու-  
թիւնը ստացած էին "խաղաղական պաշարում մը" ի  
գործ դնելով՝ իրենց պահանջը գանձել Վէնէզուէլայէն,  
բայց Նախարարապետ Հէյ՝ պղտիկ հանրապետութեան  
բերդերը ուժակոծելը, զրահանաւերը խորտակելն ու  
ցամաքը զօրք հանելով՝ երկիր գրաւելը խաղաղական  
պաշարում մը չի նկատեր:

Վերջի հեռագիրներ կըսեն թէ Անգղիական կառավա-  
րութիւնը մտադիր է տեղի տալ Միացեալ Նահան-  
գաց միջամտութեան և խնդրը "քաղցր տեղը կա-  
պել": Բայց Գերմանիա կը կարծուի թէ առանձինն  
պիտի ուզէ շարունակել իր ընթացքը՝ ածուխ ստա-  
նալու կայարան մը ձեռք ձգելու խորհուրդով: Այս-  
պիսի փորձ մը կարելի չէ որ թոյլատրուի իրեն Միաց-  
եալ Նահանգաց կողմէ. եթէ Գերմանիա յամառի սա-

կայն՝ հետևութիւնը անխուսաբելի պատերազմ է Մի ացեալ Նահանգաց հետ որ Գերմանիոյ հետ առաջինն չափուելու դիւրութիւններն ու գորութիւն ունի միշտ:

Աւաշինկիթընէ քաշուած հեռագիր մը կըսէ թէ Ծովակալ Տուվի հրաման ստացած է Ծովային Գործոց Նախարարութենէն՝ իր Նաւատորմիցը ճամբայ հանել և կեդրոնացնել զայն Վէնէզուէլայի մօտ՝ յարմար նաւահանգիստ մը և հոն հրահանգի սպասել:

Իտալիա ալ՝ միւս երկու կառավարութեանց վերջնագրին յար և նման վերջնագիր մը ներկայացուց Վէնէզուէլայի կառավարութեան՝ իր հպատակաց կըրած վնասները պահանջելով: Իտալական զեապանն ալ հրաման ստացած է մեկնել Վէնէզուէլայի մայրաքաղաքէն: Հոսմէ կը հեռագրեն թէ իտալական հինգ Ձըրահանաւոր ճամբայ կելնեն Վէնէզուէլայի ջուրերը գալու համար:

Սպանիոյ և Պէրսիոյ հիւպատոսներն ալ պահանջագրեր ներկայացուցին՝ պահանջելով Վէնէզուէլայի կառավարութենէն որ իրենց հպատակներուն ալ կրած վնասները՝ միւս տերութեանց հպատակներու վնասներուն պէս նկատողութեան առնուին ու վճարուին:

Տանիմարբա ալ պահանջագիր մը պատրաստած է պղտիկ հանրապետութեան ներկայացնելու համար:

Այսպէս՝ բոլոր քաղաքակրթեալ ազգերը կը պատրաստուին ինչալ Վէնէզուէլայի վրայ ու յօշատել զայն՝ եթէ Միացեալ Նահանգաց զօրաւոր բազուկը պաշտպան չի կանգնի անոր. և եթէ, Մընրոյի վարդապետութիւնը գոյութիւն չունենար՝ Եւրոպական անօթի գայլերը ի վաղուց ի վեր Վէնէզուէլան բաժնած էին իրենց մէջ:

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅ ԲԱՐՔԵՐ

Ծանօթ ազգային մը մեզ կը գրէ. "Ֆրէզնոյի մեր եկեղեցեաց մէջ՝ թէ Լուսաւորչական և թէ՛ Երեցական՝ մի գէշ սովորութիւն մտած է. այսինքն՝ ծնողք փոխանակ իւրեանց փոքր զաւակներ իրենց հետ եկեղեցի տանիլ և քովերնին նստեցնելու՝ կը թողուն զանոնք որ եկեղեցւոյ առջև հաւաքուին և խաղան մեծ ձայներով՝ մինչ եկեղեցին պաշտօն կը կատարուի:

"Այս ոչ թէ միայն անբարեպաշտական է՝ այլ և խիստ անվայելուչ: Մեր ծնողք միտք առնելու են միշտ որ եթէ ժամանակին իրենց որդիքը չի վարժեցնեն բարեպաշտական շաւղին մէջ քալել՝ մեծ վըտանգ կայ որ երբ նոքա մեծնան անոնց կեաքը՝ մեծաւ մասամբ՝ անբրիտանական լինի:"

Մեզ կը թուի որ մեծերն ալ սորվելու են թէ՛ պաշտամունքի ատեն, անկէ առաջ և կամ թէ անկէ անմիջապէս վերջ՝ եկեղեցւոյ առջև՝ փողոցներու ամեն կողմերը՝ խումբ խումբ կենալ և ժամերով խօսակցութեան բռնուելու չեն իրարու հետ: Ոչ յարմար ժամանակն է այդ և ոչ ալ թարմար վայրը՝ իրարու հետ տեսնելու համար:

Կ Ա Ր Դ Ա Ց Է Ք

	Չեղջուած գին	Սովորական գին
	Տոլ.	Տոլ.
22 փաւնտ շաքար	1,00	1,20
2 փաւնտ կանաչ ոուրճ	50	60
5 փաւնտ բրինձ	1,00	1,20
10 փաւնտ սսեռ	50	60
5 փաւնտ սսպ	30	40
1 պարկ ալիւր	75	85
1 փաւնտ թէյ	65	80
7 փաւնտ լոպիա	30	35
	5,00	6,00
3 փաւնտ քէնտի	30	40
3 հատ սարտին	30	40
1 սնտուկ քաղցր քրաքր	25	35
3 տուփ Իկըլ կաթ	45	50
1 շիշ խմորեղէնի անուշ	45	50
7 փաւնտ խնձոր	25	35
6 փաւնտ բրինձ	50	60
	2,50	3,10

Փորձով ցոյց տալու համար թէ մեր ապրանքները ոչ միայն ընտիր՝ այլ աժան են ուրիշներու հետ բազդատելով՝ որոշած ենք ծախել սա Չ կարգի ապրանքները նշանակուած գեղջերով՝ եթէ հաւաքաբար գընուին: Դիտելի է թէ ուրիշներու նման՝ քիչ գործածուած ապրանքներ չի կան այս ցանկերուն մէջ, և ոչ ալ ինչ ինչ գներ բարձր նշանակուած են՝ միւսներու պակասը գոցելու համար: Հինգ տողարի մէջ մէկ տողար՝ իսկ երկուք ու կէսին մէջ 60 սէնթ շահ ունիս: Փորձէ անգամ մը: Նոր ցանկեր՝ գալիք շարթու:

Մ. Մ. ՆՇԻԿԵԱՆ, Նպարավաճառ  
Հիւզ Հօթէլի շէնքին մէջ, Ֆրէզնօ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Այ փողոց, Ֆրէզնօ, Քալ.  
Թորոս Չրաքեան — — — Ճաշարանատէր  
Յարգանք կը ծանուցանէ իր յանախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ ձէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ բրած է: Կերակուրներու գնին վրայ թէև յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր տալ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի ամչնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու: Փորձեցէք մի անգամ:

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք: Գնելու հետ ընտրութեան իրաւունք: Պատի թուղթեր կը փակցունենք, ու կը ներկենք:

Parolou tez Shop, 1153-1155 Այ փողոց, Էվընճըրի կիցը:

# ՍԱՆԹԱ ՖԻ

**\*\* ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻԾԸ \*\***

Ճամբորդին համար ամեն հանգիստ և զիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւելքէ հոս գալու համար:

Ուղղակի շոգենաւային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար: Տոմսի դրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ դրամը



ետ կը տրուի: Սան Ֆրանսիսկո երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքի գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնո: Թ. Ա. ձՕՆԱ, Գրծկ:

## Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի

Երկաթուղեաց Ընկերուչքիւն

### Ֆ Ր Է Զ Ն Օ

ԸՆՏՐՐԹԷՅՖԻՆԿ ՓԱՐԼՐՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր

1154 ձէյ փողոց, — Ֆրէզնո. — Թէլէֆօն Մէյն 160

### Ե Ս Թ Ե Ր

Գրեց՝ ՎԱՐԴԵՆԻ

Ազգային իրական կեանքէ առնուած 237 երեսներէ բաղկացեալ վիպասանութիւն մ'է՝ հայ աղջիկէ մը գրուած: Տպագրութիւնը մաքուր է և հատորը լաթակազմ: Ծննդի և Նոր Տարիի համար յարմար նուէր:

Գինն է մէկ տոլար. կը ծախուի Ե. Յ. Մելիգոնի բով, թիւ 403 Էլ փողոց, Ֆրէզնո:

## Ս. Ա. Շաքրըք եւ Ընկ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1003 ձէյ փողոց, Ֆրէզնո. Թէլէֆօն, Ուայթ 566

Վարձու կուտան ու կը վաճառեն այգիներ ու ամեն տեսակ պտուղներու ծառաստաններ: —

Ամեն տեսակ բերքեր կը գնեն ու կը վաճառեն Զ Այգի, ծառաստան, պարսպ կամ անշակ հող գնել կամ ծախել ուզողները ընդհանրապէս մեզ կը դիմեն: Գուն ալ փորձ մը ըրէ և տես թէ գո՛հ չե՞ս ըլլար: Անհամար հայ յաճախորդներ ունինք մենք: Եթէ այգի տնկելու միտք ունիս՝ անպատճառ մեզ տեսներու եկ: Կտոր մը շատ ընտիր և աժան հող ունինք ծախու որ այգիի համար մեծ յարմարութիւն ունի:

## ՆՈՐ ԴԱՐԸ

(Շարունակութիւն և վերջ)

Բ.

Մութ է պատեր մեր երկիրը,  
Լուսութիւն է տիրեր անդ.  
Արիւն բուրէ ամեն կողմէ,  
Հայաստանը՝ քար ու քանդ:

Խաւարը հոն գերութեան հետ  
Միահեծան է տիրեր.  
Վհատութեան ծանր ոգին՝  
Հայն է կապեր կաշկանդեր:

Հովն հայրենի մեղմիկ փչէ  
Արեան իր հետ բերէ հոտ.  
Շղթաներու շառաչիւններ  
Լսուին սաէպ հոս ու հոգ:

Մարդիկ թմրած են քունի մէջ.  
Մեռերութիւն յուսահատ.  
Կարծես մահուան կըսպասէ հոն  
Ամեն կարիճ հայ անհատ:

Աստղեր չի կան՝ երկինք կուլայ,  
Անոր արցունք կաթկթին՝  
Յնչում տալու Հայաստանցի  
Բազմաչարչար անբաղդին:

Աւերակաց մէջ շրջի հոն  
Սեւեր հագած՝ համարձակ  
Գորովագութ հոգին՝ յերկնից  
Հայաստանեայց՝ հերարձակ:

\* \* \*

Եւ հեռուէն լերանց ետև  
Կրակ մը կայ՝ աղօտ լոյս.  
Ժամանակէն մօտ է ծագիլ  
Յոյսի շքեղ արշալոյս:

Արեւելքը երկանց մէջ է՝  
Արդ խաւարը կուտայ փախ.  
Թմրած Հայն ալ ո՛հ կը շարժի  
Կեանք մը կառնէ նոր անվախ:

Արեւելքը բռնկած է՝  
Ահա մութը մեկնեցաւ.  
Շղթայակապ հայու որդին  
Ելաւ ոտքի կանգնեցաւ:

Եւ արդ ծնաւ ժամանակէն  
Ոսկի մանուկ միամօր,  
Մէկ ձեռքին մէջ կրակ ու լոյս,  
Մէկին՝ Հայոց կեանք մը նոր:

# GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒԻ, ԳԼԻԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆիսք Պլաք — Ֆրէզնո.  
Թէյէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արգէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատարար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ճՕՐՃ ԵՂԱՅՐՆԵՐԻՆ:

## ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Երիտասարդ տղան աղջիկ մը կը սրիէ — Այդ իրեն գիտնալիք գործն է: Գեռատի աղջիկը երիտասարդ մը կը սիրէ — Այդ ալ անոր գիտնալիք բանն է: Ասոնք օր մը կամուսնանան ու պէտքը կըզգան

## ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԻԻ

ԱՅԴ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

*Sorahy Pashianurli Lili.*

## ՄԱՔՍՈՒԷԼ ԵՒ ՄԸՏՃ,

ԼՂԻՍԱՆԿԱՐԻՉՔ

Ֆրէզնո և ճէյ փողոցներուն  
անկիւնը, Ֆրէզնո

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՔԱԼԻՖՕՐ-

ՆԻՈՅ ՄԷՉ ԱՄԵՆԱԼԱԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ Լ

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԿԸ

ՊԱՏՐԱՍՏԵՆ



## Ճ. Ք. ԵՕՔՐՄ

Սազթ Քօրթ փողոց, Վայսէլիա, Քալիֆօրնիա:

Կը ծանուցանէ թէ 700 էյքրի շափ առաջնակարգ հող ունի Տայնուպայի մօտերը որ այգիի համար շատ յարմարութիւն ունի: Հողին տեսակներն են սև, ծանրը, աւազային և կարմիր: Զուրի իրաւունք հողին հետ: Քանի մը Հայեր գնած քչ շատ գոհ մնացած են այս հողերէն: Գներն են՝ 20է մինչև 35 տուր էյքրը: Պայմանները՝ կարծուածէն աւելի դիւրին: Աւելի մանրամասնութեանց համար գիտել Քաղաքացիի գրասենեակը:

## Վ. ՓԱՐՔԸՐ ԼԱՅԸՆ,

Կանկարասեաց Թագաւորը ի

Ֆրէզնո, Քալիֆօրնիա

## ԿՈՉ ՄԸ

—0—

Ամբողջ Հայ Ազգը իր գոյութեան բոլոր միջոցին՝ սրդեամբ ապացուցած է թէ ինք առատաձեռն ժողովուրդ մ'է եղած: Պատմութիւնը յայտնի կը ցուցնէ թէ նա իր եկեղեցական, բարեսիրական և այլն հաստատութեանց բոլոր ծախքերը յօժարութեամբ սրտի վճարած է առատօրէն, և կը վճարէ՝ համեմատութեամբ իր ստացուածոց՝ առաւել քան ուրիշ ազգեր:

Տարակոյս չկայ որ եթէ Հայ Երեցական Եկեղեցւոյն մէջ դժբախտաբար պատահած դժուարութիւնք տեղի ունեցած չըլլային՝ եկեղեցւոյն շինութեան հարկ եղած ամբողջ գումարը խողովրդեան մէջէն հաւաքուած և շէնքը շինուած լինցած պիտի ըլլար արդէն: Յիշեալ դժուարութիւնք խոչնդոտ եղան այս փափաքելի գործին: Ուստի աս պարագայից ներքև խիստ վաշիտուչ լինի կը թուի որ բոլոր Հայերը՝ թէ՛ ի Ֆրէզնո և թէ՛ այլուր ի Միացեալ Նահանգս՝ մեծանձնութեամբ, քրիստոնէական ու հայրենասիրական ոգով և առատաձեռնութեամբ օժանդակ հանդիսանան իրենց կամաւոր նուէրներովը, որ յիշեալ եկեղեցւոյն շինութիւնը աւարտի՝ ի փառս Քրիստոնէութեան և ի պարծանս Հայ Ազգին:

\* \* \*

## ՈՒՇԱԳՐԱԻ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐ

—0—

Փրօֆ. Աստի Հօլ վերջերս մասնաւոր ուշադրութիւն հրաւիրած է հետեւեալ երկու կարգ նշանակելի թուանշաններուն վրայ զորս կարժէ մեր ընթերցողաց ալ ներկայացնել՝ իբրև նորութիւն:

- 1 անգամ 9 և 2 կընէ 11
- 12 անգամ 9 և 3 կընէ 111
- 123 անգամ 9 և 4 կընէ 1111
- 1234 անգամ 9 և 5 կընէ 11111
- 12345 անգամ 9 և 6 կընէ 111111
- 123456 անգամ 9 և 7 կընէ 1111111
- 12345678 անգամ 9 և 8 կընէ 11111111
- 123456789 անգամ 9 և 9 կընէ 111111111

- 1 անգամ 8 և 1 կընէ 9
- 12 անգամ 8 և 2 կընէ 98
- 123 անգամ 8 և 3 կընէ 987
- 1234 անգամ 8 և 4 կընէ 9876
- 12345 անգամ 8 և 5 կընէ 98765
- 123456 անգամ 8 և 6 կընէ 987654
- 1234567 անգամ 8 և 8 կընէ 98765432
- 123456789 անգամ 8 և 9 կընէ 987654321

## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ ՈՒ ԱՉԱՏ ՈՐՄՆԱԳԻՐԻ

—0—

Լօնտօնէն կը հեռագրեն թէ Թուրքիոյ Աղաս Որմնաղիլը (Ֆրէ Մէյլըն)՝ խնդրագրով մը դիմում ըրած են Անգղիոյ Թագաւորին և խնդրած են անկէ ամէն ջանք ի գործ դնել՝ բանտարկութենէ ազատելու համար Թուրքիոյ նախկին Սուլթանը՝ Մուրատ էֆէնտին որ իբր քսան հինգ տարիէ ի վեր իր եղբոր՝

այժմեան Սուլթանի հրամանաւ բանտարկուած կը պահուի՝ իբր խելագար: Եւրոպական թերթեր կըսեն և իրողութիւն մ'ալ է թէ Մուրատ ո՛չ միայն այժմեան հրէշէն աւելի խելացի է՝ այլ անկէ անհամեմատ աւելի զարգացած ու քաղաքակրթեալ անձ մըն է, որ եթէ գահազուրկ չըլլար՝ թերեւ այսօր Թուրքիան աշխարհիս բարգաւաճ երկիրներուն մէջ՝ նշանակելի տեղ մը կը բռնէր:

Հարկ է ըսել թէ Սուլթան Մուրատ անդամ մըն էր և է ցարդ Աղաա Որմնադիրներու մեծ ընկերութեան. իսկ Անգղիոյ թագաւորը՝ Մեծին Բրիտանիոյ Որմնադիրներուն ամենաբարձր պաշտօնեայն էր՝ գահ բազմելէ առաջ: Իր մօրը յաջորդելէ վերջ՝ Ետուարդ թագաւորը այդ պաշտօնը ուրիշի մը յանձնեց՝ թէև կը մնայ տակաւին ամենազգեցիկ անդամ մը աշխարհահռչակ Որմնադիրներու մէջ:

Մասոնական թերթեր կը մտածեն թէ Անգղիոյ թագաւորին միջամտութեամբ Մուրատ պիտի կրնայ իր ազատութիւնը ձեռք բերել վերջապէս:

\*\*\* ՈՍԿԵՓՈՐԻԿ \*\*\*

\*\* Յ. Առաքելեան 80 արտավար երկիր գնեց Ուիլիամ անուն անձէ մը:

\*\* Հ. Մ. Միքայելեան երկու լաթ հող գնեց քաղաքիս մէջ:

\*\* Երուանդ Եանգեան 20 արտավար թուղի ծառաստան գնեց՝ քաղաքէս իբր 5 մղոն հեռու դէպի հիւսիսային արևմուտք:

\*\* Ա. Տ. Էլֆըրս անուն անձը Յ. Առաքելեանի և Բ. Առաքելեանի վաճառեց 160 արտավար հող:

\*\* Պ. Թորիկեան Օրօսայի կողմերը՝ գնեց քառս արտավար այգիի համար՝ պարսպ հող:

\*\* Մինաս Արութեան 20 արտավար այգի գնեց քաղաքիս մօտերը:

\*\* Արրահամ Յովհաննէսեան 30 արտավար երկիր գնեց Ուայթ Պրիճի ճամբուն վրայ:

—0—

Երկու չարածճի տղաք՝ որին մէկը քարոզչի մը կը հանդիպին ու կը փորձեն կատակ մը ընել անոր: Տըղաքներուն մէկը կը մօտենայ պատուելիին ու տխուր ձայնով մը կը հարցունէ.

Պատուելի, լսեցի՞ք թէ ինչ մեծ ու անդարմանելի դժբաղդութիւն պատահեցաւ երէկ:

- Չէ՛. բան մը չեմ լսած. ի՞նչ է պատահեր:
  - Ախ. ինչպէ՛ս ըսեմ. սիրտդ կոտրել չեմ ուզեր:
  - Խօսէ, տղաս, ի՞նչ է պատահածը:
  - Ստանան հապա յանկարծամահ եղաւ:
- Պատուելին տղայոց զիտաւորութիւնը հասկնալով՝ կը մօտենայ ու ձեռքերը անոնց զլխին դնելով կըսէ.
- Խեղճ տղաք, դուք ո՛ւր պիտի մնաք:

—0—

Իռլանտացին—Լսեր եմ թէ Թէքսասի մէջ ստենարաններն ու էջերը կը կախեն:

Ատենախօսը—Փառք Աստուծոյ որես և դու հոն չեմք:

Առեւտրական Կոտորած  
**Ա. ԸՍԹԱՔ**  
Հանդերձարխան

Թանքակիվինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են: 1027 ձէյ փողոց, — — — Ֆրէզնօ, Քալ.

**ԳՆԱ ԱՌ**  
**ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.**  
ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԸՆՆՁԵՐՈՒ,  
ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ**  
1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ ԹԷԼԷՑՕՆ  
ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ Էքսչէնչ —ԹԻԼ 2

**ՅԱՏՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ**  
Մարդոց Հանդերձեղէններու  
ՄԷԿ ՇԱԲԱԹԻ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ  
**12 ԵՒ 15 ՏՈՂԱՐՆՈՑՆԵՐԸ**  
**10 Տորսի միայն**

Առնք շինուած են շէվիլթ, սէրճ, քլէյ ուօրսթըա և քաշիր կերպամներէ, ու կտրուած են վերջի ձևերուն վրայ: Գոյներու ամեն տեսակներ:

**Մեր 6,50ի եւ 8,50ի**  
Օվըրթթները գալ քննելու ես: Աշխարհը չի կրնար մրցիլ երբէք անոնց դէմ: Բոլոր մեր հանդերձեղէնք ժամանակին նորութիւններն են:

The . . . . **C. O. D.**  
**S T O R E**  
Louis Solomon 1737 Mariposa St.

**ՕԲԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՄ**  
Գաղղիական Հացագործ.  
ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱԵԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ  
1318 Բէյ փողոց — — — Ֆրէզնօ, Քալ.

**ՏԻՔ. Յ. Հ. Բարսեղեան**  
ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՑՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ  
Սենեակ 16 17, Թէլէֆօն Պու 492. Ֆրէզնօ Քալ.